ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИА

АРМАВИРСКИЙ МАРЗ

МУНИЦИПАЛИТЕТ

С. АРЕВАШАТ

հեռ. 098443308

тел. 098443308

Էլ.փոստ arevashatgyux@mail.ru

թիվ __50__

05. 03. 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝
Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի համայնքի ղեկավարի 2019 թվականի փետրվար ամսվա ընդունած որոշումները ու արձակած կարգադրությունները:

Արևաշատի համայնքի ղեկավար /Սուսաննա Գևորգյան/

Կատարող
Ա.Վարդանյան
+347-98-80-39-79

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
Մարզի Արևաշատի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի թիվ 16.
Հեռախոս /098/44-33-08
Էլ փոստ arevashatgyux@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

15 փետրվարի 2019 թվականի N 3

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի համայնքապետարանի աշխատակազմում թափուր հաստիքի համար հայտարարել մրցույթ:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի համայնքապետարանի աշխատակազմում թափուր հաստիքի համար հայտարարված մրցույթի աշխատանքների իրականացնելու համար լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արփենիկ Վարդանյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2019թվականի փետրվարի 15
գ. Արևաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔ
Երևանյան խճուղի թիվ 16
Հեռախոս 098443308
Էլ փոստ arevashatgyux@mail.ru

*ՈՐՈՇՈՒՄ*

*21 փետրվարի 2019 թվականի թիվ 4-Ա*

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 39 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի 2 ընտանիքի հատկացնել 60,0հազար ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2019 թվականի փետրվարի «21»-ի
գ. Արևաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21 -Ի
ԹԻՎ 4-Ա ՈՐՈՇՄԱՆ

# ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

1. Մարգարյան Կարինե 30000
2. Մկրտչյան Գայանե 30000

Համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար Արփենիկ Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ

«__22___» ՓԵՏՐՎԱՐԻ 2019Թ. Թիվ ----5-Ա-----

-

ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի երկրորդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի համայնքապետարանի աշխատակազմի և մշակույթի տան աշխատակիցների հանգստի՝ 2019 թվականի ամենամյա հերթական արձակուրդի տրամադրման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ
2019 թվականի փետրվարի «__22__»
գ. Արևաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ
Փետրվարի 22-ի թիվ 5-Ա
ՈՐՈՇՈՒՄԻՑ

# ԳՐԱՖԻԿ

## ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ

| Հ/Հ | Ազգանուն Անուն | Պաշտոնը | 2019թ. | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
| 1 | Գևորգյան Սուսաննա | Համայնքի ղեկավար | | | | | | | | | ■ | | | |
| 2 | Վարդանյան Արփենիկ | Աշխատակազմի քարտուղար | | | | | | | | | | ■ | | |
| 3 | Բաբլոյան Հովիկ | Ղեկավարի տեղակալ | | | | | | | | | | | ■ | |
| 4 | Մարգարյան Ռուզաննա | Առաջատար մասնագետ | | | | | | | | ■ | | | | |
| 5 | Բարեղամյան Սիրանուշ | Առաջատար մասնագետ | | | | | | | | | | | ■ | |
| 6 | Արզումանյան Նազիկ | Առաջին կարգի մասնագետ | | | | | | | ■ | | | | | |
| 7 | Ղազարյան Հասմիկ | Գործավար | | | | | | ■ | | | | | | |
| 8 | Ղևոնդյան Անդրանիկ | Վարորդ | | | | | | | | | ■ | | | |
| 9 | Մնացականյան Մարետա | Հավաքարար | | | | | | | ■ | | | | | |
| 10 | Սարգսյան Զորիկ | Մշակույթի տան տնօրեն | | | | | | | | ■ | | | | |
| 11 | Ստեփանյան Կարինե | Գրադարանավարուհի | | | ■ | | | | | | | | | |
| 12 | Մակարյան Քնարիկ | Պահակ | | | | | ■ | | | | | | | |

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /Ա.Վարդանյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
Մարզի Արևաշատի համայնք.
Երևանյան խճուղի թիվ 16.
Հեռախոս /098/44-33-08
Էլ փոստ arevashatgyux@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«26» -----02----- 2019 թվականի N 6-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ.թիվ 1066-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 24.01.2019թ. N01/8/00408-2019 գրությամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի բնակիչների սեփականությունը հանդիսացող 0,51 հա մակերեսով պտղատու այգին փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանմանը, իսկ մեկ օրինակը սեփականատերերին:
3. Գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքերն ավելի բարձրարժեք հողատեսքերի փոխելու պետական գրանցումն ստանալուց հետո, այն ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշիռում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2019թվականի փետրվարի 26
գ. Արևաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արևաշատ համայնքի ղեկավարի
2019 թվականի փետրվարի 26 թիվ 6-Ն որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

ՀՀ Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի վարչական տարածքում գյուղատնտեսական ցածրարժեք հողատեսքերը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքերի

| Հ/Հ | Սեփականատիրոջ անուն, ազգանուն | Հողամասի ծածկագիր | Հողամասի չափ հա | Ինչ հողատեսք է | Ինչ է դարձել |
|---|---|---|---|---|---|
| 1 | Խանամիրյան Մելանիա | 04-026-0040-0014 | 0.07 | վարելահող | պտղատու այգի |
| 2 | Մկրտչյան Սպարտակ | 04-026-0038-0031 | 0.10 | վարելահող | պտղատու այգի |
| 3 | Հանեսյան Անդրանիկ | 04-026-0053-0019 | 0.06 | վարելահող | պտղատու այգի |
| 4 | Խաչատրյան Կարեն | 04-026-0038-0033 | 0.09 | վարելահող | պտղատու այգի |
| 5 | Գուլամբարյան Բենիկ | 04-026-0058-0018 | 0.10 | վարելահող | պտղատու այգի |
| | | 04-026-0058-0019 | 0.09 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 0.51 հա | | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

«01» Փետրվարի 2019Թ. ԹԻՎ 2-Ա

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

01 Փետրվարի 2019թ

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 24.01.2019թ թիվ 01/8/00408 գրությունը՝ գյուղատնտեսական նշանակության հողատարածքներում քանդված և նոր հիմնված այգիների վերաբերյալ

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել հաշվառումն իրականացնող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի և մինչև 2019թ-ի փետրվարի 18-ը ընկած ժամանակահատվածում իրականացնել հաշառման աշխատանքները և տեղեկատվությունը ներկայացնել մարզպետարան՝ եզրակացություն ստանալու նպատակով ։

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից ։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎՇԱՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ փետրվարի 01-Ի
2—Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանձնաժողովի նախագահ՝

| | |
|---|---|
| Հովիկ Բաբլոյան | - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի Համայնքի ղեկավարի տեղակալ |

Անդամներ՝

| | |
|---|---|
| Նազիկ Արզումանյան | -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ |
| Զ. Սարգսյան | -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի Մշակույթի տան տնօրեն |

Աշխատակազմի քարտուղար՝ Արփենիկ Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

15 փետրվարի 2019 թվականի 3-Ա

*ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետի , 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի փետրվախի 13-ի թիվ 01/10.1/00631-18 գրությունը.

**Կարգադրում եմ**

1. 2019 թվականի մարտի 23-ին համայնքում կազմակերպել և անցկացնել շաբաթօրյակ: Շաբաթօրյակի աշխատանքներն իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին՝ (Հ. Բաբլոյանին) կազմակերպել և հսկողություն իրականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատ համայնքում անցկացվող շաբաթօրյակի աշխատանքների նկատմամբ, հատուկ ուշադրություն դարձնել ներքոհիշյալ հանրային տարածքների մաքրման և բարեկարգման աշխատանքներին՝

1) դպրոցի և դրա հարակից տարածքների

2) համայնքի հուշարձանների տարածքներին.

3) գերեզմանատան տարածքին.

4) տեղական նշանակության ճանապարհների հարակից տարածքներին.

5) ոռոգման սեզոնի հետ կապված առուների եզրերին եղած հողակույտերի վերացմանը:

3. Շաբաթօրյակի աշխատանքներին մասնակից դարձնել համայնքի ակտիվ բնակիչներին, համայնքի վարչական տարածքում առկա կազմակերպություններին:

4. Շաբաթօրյակի աշխատանքները պատշաճ կերպով կատարելու համար ապահովել անհրաժեշտ գործիքներով, իսկ հավաքված աղբը տեղափոխելու համար՝ տեխնիկայով:

5. Հանձնաժողովին՝ (Հ. Բաբլոյանին) սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ օրվա ընթացքում պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել համայնքի ղեկավարին:

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2019 թվականի փետրվարի 15

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի Արևաշատ

համայնքի ղեկավարի

2019 թվականի փետրվարի 15 -ի

N 3-Ա կարգադրության

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Բաբլոյան - համայնքի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Վարդանյան – Արևաշատի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար .

Ռ.Մարգարյան- համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Հ. Առաքելյան - << Արևաշատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն

Ն. Թևոսյան- Հ.լեզվի և գրականության ուսուցիչ

Ա. Թորոսյան - պատրոնաժ քույր

Ք.Մխիթարյան - համայնքի բնակիչ

Մ. Կարապետյան - համայնքի բնակիչ

ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐՓԵՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

«20» Փետրվարի 2019Թ. ԹԻՎ 4

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

20 Փետրվարի 2019թ N2-Ա

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի դրույքներով համայնքապետարանի ծառայողական ավտոմեքենայի վերանորոգման աշխատանքների թերությունների և կատարողական ակտերը կազմելու նպատակով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ `

1. Ստեղծել հանձնաժողով ` համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին ` /Հ. Բաբայան / աշխատանքներին մասնակից դարձնել համայնքի ավագանու անդամ` /Աղվան Հակոբյանին / իր համաձայնությամբ :
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎՇԱՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ փետրվարի 20-Ի
Թիվ 4-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԱԿՏԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ

Հանձնաժողովի նախագահ՝

Հովիկ Բաբլոյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևշատի Համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝

Զորիկ Սարգսյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևշատի Մշակույթի տան տնօրեն

Սիրանուշ Բաբեղամյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևշատի Համայնքապետարանի առաջատար մասնագետ

Աշխատակազմի քարտուղար՝ Արփենիկ Վարդանյան